ցոց անաստուածից եւ անօրինաց. եւ աստուածայական թօթափել առեալ գնա ի Բարելոնէ եւ տարեալ յԵրուսաղէմ տեսանել զանօրէնութիւն ժողովրդեանն. նա մարգարէ գոլով եւ ես անարժան եւ անիմայ եւ ամենայն մեղօք լի, որ անուամբ միայն կոչիմ քահանայ եւ ոչ գործովս, զայսպիսի աղէտս լսելով գալարէր աղիքս իմ եւ խորովէր սիրտս իմ ասելով. ով ստեղծող երկնի եւ երկրի ընդէ՞ր այսչափ յանձինս քրիստոնէից սրոյ մահու եւ գերանաց մատնեցեր զարդարն եւ զմեղաւորն ի միասին կորուսեր: Նախ զի ոչ գոյ արդար առաջի Աստուծոյ եւ ոչ մի, որպէս մարգարէն ասէ. ամենեքեան խոտորեցան ի միասին եւ անպիտանացան: Երկրորդ ի բան աւետարանին որ ասէ. արեգակն իւր ծագէ ի վերայ չարաց եւ բարեաց եւ ածէ անձրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց: Այսպէս եւ սոքայ առհասարակ կրեն զպատիժն պատուհասին, քանզի տեղեկանայի բազում աւուրս երդ եւ եկողաց որպիսութենէ կրօնից քրիստոնէից եւ պատուիրանացն Աստուծոյ պահպանութեան. եւ ոչ իմացայ: Իսկ որժամ եկին բազում զերեք արք եւ կանայք եւ խորհի փիլիսոփայք եւ նոքա եկեալ պատմէին թէ կարդ եւ կրօնք քրիստոնէութեան խափանեալ էր. ժամատեղք եւ աղօթք եւ աստուածպաշտութիւն մոռացեալ էր: Եւ ի տեղի սոցա զորացեալ էր ծուլութիւն եւ պղերգութիւն եւ արբեցութիւն եւս առաւել իբամոլութիւն. ահա պատճառն լուեալ ստուգիւ բազում երեւելի եւ հանճարեղ իմաստնոց եկեղեցականաց, որք գերեալք եկին եւ գրեցաք առ ի զգուշացուցանելոյ զհաւատացեալքս: Զի առաջ մեք մոռանամք զԱստուած եւ մոռացեալ լինիմք ի նմանէ: Եւ զայս ապականեալ երկիրն Մոռայու որ առաջի ճառիս յիշեցաք ՌՃԼԹ. թվին թէ բազումք Տաճկաց եկեալք եկին երկիրն Օսմանցոց: Ահա դարձեալ ել հրաման ի խրոխտ թագաւորէն գնալ եւ տիրել երկիրն իւրեանց եւ ապագայն Աստուծոյ է գիտելի եւ նմա փառք յաւիտեանս ամէն: Ի սոյն թվիս որ էր. ՌՃԿԴ. զարդարեցին փողոցս այլակիք վասն Մոռայու համար եւ արարին տոնանմայ դեկտեմբերի ԺԳ. օրն Գ շաբաթի:

Ճառ: Վասն կոտորելոցն Օսմանցոց եւ անկման վէգիրին եւ որոց Ը:

Եւ ետ առնելոյ զայն Մոռայու երկիրն եւս քան զեւս չարացաւ վէգիրն ի վերայ քրիստոնէից, զի էր փեսա թագաւորին եւ յոյժ սիրեցեալ յաջս նորա, քանզի տեսեալ Մոռայու երկիրն եկեղեցեաց արծաթեղէն եւ օսկեղէն զանօթն, զի էր յոյժ բազում եւ իւր իշխանութեան եկեղեցիքն այլ այնպէս կարծելով, եւ սկսեց ձեռն արկել Ստամպոլու մէջի եւ այլ շրջակայ եւ անուանի եկեղեցեաց եւ վանօրէից առելով թէ. թագաւորական միտի մալ է եկեղեցոյ անօթքն, պարտիք տալ արծաթեղէն զանօթն խազնէի եւ այսու պատճառաւ քանի մի հոռմոց անուանի եկեղեցիք քակեց, պատճառելով թէ դուք քրիստոսի մէջ ճէպհանէ կու պահէք: Եւ եհան հրաման թէ քրիստոնէից տանն թֆանք կամ այլ պատերազմի զէնն կողոպտել եւ առնուլ թագաւորական խազինէի, որ եղեւ խակ եւ այսու պատճառաւ սկսեցին օրօնել քրիստոնէից տանն եւ գրել զնչչն եւ զստացուածս արծաթեղէն եւ օսկեղէն, մարգարտեղէն եւ զակունս մեծագինս եւ այլ թէ նաղտ եւ թէ վէճ զամէնն թէֆտէր առնուին եւ դարձեալ տիրոջ կու տային: Եւ զի երկարեցից օր մի թագաւորն եւ վէգիրն խորհուրդ են արեր որ իւր երկիրն եղող քրիստոնեայքն Նէֆրամ հանեն եւ կոտորեն եւ զայս խորհուրդ ի մէջ չէյխ իսլամն եւ այլ մեծամեծ եւ անուանի կարդացողք կանչեն եւ նոքա եկեալ ասեն. ով թագաւոր զայս անպատեհ գործ է, զոր դու խորհեալ ես. քանզի սոքա խառաչ կուղար են մէյդամպալը մուսլումուն ըրայէ անուանին դու լախէ չունիս. թէ զմեզ կու սպանանես ահա պատրաստ եմք ի մեռանիլ. եւ այլ բազում բանիւ հազիւ կարացին ցրուել զխորհուրդ թագաւորին կամ վէգիրին: Բայց ոչ զիջաւ վէգիրն ի չար բարուցն եւ այնպէս իբրեւ զկատաղի եւ արեան ծարաւի քրիստոնէից ազգին, ելեալ գնաց պատերազմ ի վերայ Նէմսէի թվին ՌՃԼԵ. բայց դեռ չէր լցեալ ժամանակ պայմանն զոր առաջի ճառիս պատմեցաք եւ առաքեաց էլչի Նէմսէ եթէ քեզ հետ հաշտ եմ եւ ունիմք ուխտ եւ դաշինք բայց ինձ ճամբայ տաս որ անցեալ գնամ ի վերայ Վէնէտիկու. զայս հնարս իմացաւ առնորէն եւ այսու պատճառաւ կամէր որ քակէր գուիտն. իսկ նոքա պատասխանեալ ասեն. քեզ ճամբայ տալէն երկիրս բովանդակ տալն լաւ է. թէ դաս իմ վերայ ահա պատրաստ եմ ի պատերազմ, բայց դու ուխտազանց կու լինիս:

Իբրեւ լուաւ վէգիրն զրանն Նէմսէի հպարտացաւ ասելով ահա պատրաստ կացիր, գնալու եմ ի քոյ վերայ եւ այսու պատճառաւ խաղաց գնաց եւ բանակեցաւ ի Վէրէտինի դաշտն անթիւ զօրօք. եւ Վէրէտին զալէսին մէջի սակաւ արամբք թողեալ Նէմսէն եւ ինքն խափ տուեալ. եւ քանի մի տեղ դարան գործեալ եւ զզօրսն բաժանեալ. իբրեւ տեսին Օսմանցիքն նուազութիւնն Նէմսէի թողին զրանակս իւրեանց եւ արարին կորուուշ նախ վէգիրն եւ ապա ԺԲ. անուանի եւ մեծամեծ պարօնք հանդերձ զօրօք իւրեանց ի վերայ բերդի եւ պաշարեալ պատեցան եւ կամէին առնուլ զնա, յանկարծակի ելեալ դարանակալքն Նէմսէի եւ եկեալ չորս զիմաց զապտ արին այնքան ահագին բանակն Օսմանցոց եւ սկսան կոտորել զնոսա անխնայարար. նախ վէգիրն անկաւ եւ ապա պարօնք. իբրեւ տեսին զանկումն նոցա զորքն տաճկաց անկաւ ահ եւ դողումն ի վերայ սոցա եւ կամեցան յետս փախճել, բայց ոչ էր տեղիք փախստեան. անդ էր տեսանել զտաղանպն հեթանոսաց, քանզի քաջքն խիզախէին, արիացեալքն զոչէին զանձրամիտքն յիմարէին, եւ վատասիրտքն լըքանէին, սուսերքն փայլէին, եւ սաղաւարտքն շողշողային ի բազմախուռ նիզակացն, որպէս հրացկութիւնք եռային. երկնից ի բայլմանէ պատեթիւնք վառային. երկնից ի բայլմանէ պատեանդէն վառելոցն ընդ ճառագայթից արեգականն միացեալ ոստոստային, որ եւ կորկորմունք վահանաւորաց եւ ճայթճայթմունք լարիան ի լսելիս մարդկան խլացուցանէր. եւ ասա էր տեսանել զաղէտ եւ տաղնապ մեծի կորստեան սոցա զի որպէս փայթք հարեալք ի փայթահարաց ի մէջ մայրեաց եւ եղեալ, այսպէս եւ սոքայ հարեալք բազմադեանի, այսպէս եւ սոքայ հարեալք բազմահար հարուածովք եւ անկեալ ի դեանի դիահար թաւալ խաղային ի մէջ ճապաղի արեանց: Ոմանց սկառարակն երկուս հերձեալ ընդեղաղոյս սատակեցան, եւ ոմանց կլարն ներքին ընդ կոկորդեաւն ի բաց եղեալ, եւ ոմանց ընդ միջանն երկու բաժանեալ հերձաւ եւ շատք գլխահատք կորեան. իսկ ոմանք կիսամահք լեալք ոտնահատք եւ ձեռնահատք, գլխահատք եւ ականջահատք, անկեալք ի դեանի տրքային եւ հեծային, մինչեւ ի սպառել չնչոցն կսկծալի հեծեծանօք զհոգիս իւրեանց արձակէին. իսկ զմնացեալսն բարձեալ ի սայլի յետս դարձուցին եւ էր թիւ սայլին երկերիւր. եւ բերեալ Օսմանցոց երկիրն հասուցին հանդերձ նամէօք եւ էր օրինակ դիտոյս այս:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ ՏՈՀՄԻ ԵՒ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

Աշխատասիրեց՝ ՅՈՎՍԷՓ ԹԱԴԷՈՍԵԱՆ

(Շարունակութիւն:)

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ Դ.

ՃԵՄԱՐԱՆԸ ԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆՈՒՄ (1848—1865)

I.

1848 թ. մայիս 10ին բարձրագոյն վաւերացման արժանացած Ճեմարանի Նոր Կանոնագիրը բաց էր անում Ճեմարանի առջեւ այնպիսի լուսաւոր հեռանկարներ, որ Խաչատուր Յովակիմեան Լազարեանը Ս. Պետերբուրգից գալիս է Մոսկուա եւ նոյն թուի սեպտեմբեր 20ին կազմակերպում է շքեղ հանդէս Ճեմարանում, նպատակ ունենալով հրապարակաւ յայտնելու Ճեմարանի եւ հայ հասարակութեան սրտաբուխ շնորհակալութիւնները Կայսրին, Ժողովրդ. Լուսաւորութեան Նախարարութեան եւ Ճեմարանի Գլխաւոր Կառավարչապետ իշխան Օրլովին:

Այս հանդէսին ներկայ են եղել պետական զինուորական ու քաղաքացիական ակնաւոր անձինք ու նաեւ Համալսարանի պրոֆեսորներ ու գիտնականներ:

Ինչո՞ւմն էր կայանում Նոր Կանոնագրի էութիւնը, ի՞նչ բարիքներ էր նա բերել Ճեմարանին, որ այդքա՞ն մեծ ուրախութիւն էր պատճառել Լազարեաններին եւ Հայ հասարակութեան:

Համաձայն մեր ձեռքի տակ եղած աղբիւրների հաղորդագրութեան՝ հետեւեալ էական բարեփոխութիւններն էին կատարուած:

ա. Ճեմարանը հռչակւում էր առաջին կարգի, այսինքն՝ բարձրագոյն դպրոց, համահաւասար իրաւունքներով եւ առանձնահատուկ նշանակութիւններով Ժողովրդական Լուսաւորութեան Նախարարութեան ենթակայ բոլոր բարձրագոյն դպրոցներին, մասնաւորապէս Ճեմարանը հաւասարւում էր այն ժամանակուայ համբաւաւոր լեկէոններին՝ Դեմիդովսկի, Բեզբորոդկոյի եւ Ռիշելիոյի:

բ. Ճեմարանի հինգդասեան դասընթացքը վերածւում էր ութդասեան դասընթացքի.

© National Library of Armenia

արեւելեան լեզուների դասաւանդութիւնը թէեւ պիտի տարուէր բոլոր ութ դասարաններում, բայց մասնագիտօրէն պիտի ուսումնասիրուէին վերջին երկու դասարաններում (7րդ եւ 8րդ)։ գիմնազիոնական դասընթացքի առարկաները, ի մէջ առեալ լատիներէնը, պահպանւում էին։

գ. Նոր Կանոնագրով, եւ ապա 1849 թ. դեկտ. 21ին կատարուած լրացումներով ու փոփոխութիւններով, ուսման ծրագրի մէջ մտնում էին հետեւեալ առարկաների դասաւանդութիւնը. 1. Կրօն եւ Եկեղեցական պատմութիւն. 2. Արեւելեան լեզուներ՝ Հայերէն, պարսկերէն, տաճկերէն, թուրքերէն, արաբերէն, վրացերէն[1]. 3. Ռուսաց լեզու եւ գրականութիւն. 4. Մաթեմատիկա. 5. Ֆիզիքա. 6. Աշխարհագրութիւն եւ վիճակագրական տեղեկութիւններ. 7. Ռուսաց եւ ընդհանուր պատմութիւն. 8. Ռուսաց օրինագիտութիւն. 9. Լատիներէն. 10. Ֆրանսերէն. 11. Գերմաներէն. 12. Վայելչագրութիւն. 13. Նկարչութիւն եւ գծագրութիւն. 14. Մարզանք եւ 15. Պար։

դ. Ճեմարանի Վարչութիւնը ունենալու էր հետեւեալ կազմը. 1. Գլխաւոր Կառավարչապետ. 2. Հոգաբարձու. 3. Վերատեսուչ (դիրեկտոր). 4. Տեսուչ (ինսպեկտոր). 5. Խորհուրդ եւ 6. Դիւան (պրաւլենիէ)։

ե. Իւրաքանչիւր գիշերօթիկ աշակերտի համար, որ սովորում է իր սեփական հաշուով, սահմանւում էր ուսման վարձ՝ 300 ռուբլի արծաթ տարեկան եւ 35 ռուբլի մուտքի վճար հագուստի ու սպիտակեղէնի համար. երթեւեկ աշակերտների համար, որոնք ցանկանում էին ստանալ նախաճաշ, նշանակուած էր տարեկան 160 ռուբլի արծաթ։

զ. Ուսուցչական կազմը պիտի ունենար՝ 4 պրոֆեսորներ, 11 ասաջ ուսուցիչներ, 5 կրտսեր ուսուցիչներ եւ ապա որոշ թուով դաստիարակներ ու վերակացուներ։

Բացի այդ ամէնը, Նոր Կանոնագրի մէջ մտցրուած էր, որպէս հիմնական սկզբունք, նաեւ այն, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսանում է Ճեմարանի Առաջնագոյն անդամը, իսկ Ռուսաստանի Հայոց թեմական առաջնորդները համարւում էին պատուակալ անդամներ։

[1] Հայերէնը պարտադիր էր հայ երեխաների համար, վրացերէնը՝ վրացի, թուրքերէնը՝ թուրք աշակերտների համար։

Միաժամանակ Ճեմարանի Հոգաբարձուն, որպէս ղեկավար իր դպրոցի, ստանում էր Համալսարանի եւ Ուսումնական շրջանի Հոգաբարձուներին (попечитель округа) համահաւասար իրաւունքներ. Լազարեանները ճանաչւում էին իրենց դպրոցի անկախ տէրեր, իսկ Ճեմարանը՝ ստանում էր անկախ դիրք։

Տարակոյս չկայ, որ 1848 թ. Կանոնագիրը, որ յաջորդ տարին ենթարկուեց մի քանի փոփոխութիւնների ու լրացումների, մի չատ չօշափելի քայլ էր Ճեմարանի իրաւական, կրթական ու վարչական մասերի բարեկարգման մէջ։ Այդ էր պատճառը, որ այդ Կանոնագիրը առաջ բերեց ընդհանուր գոհունակութիւն թէ Ճեմարանի ներսում եւ թէ դուրսը՝ հասարակական լայն շրջաններում։ Եւ մենք ստորեւ կը տեսնենք, որ դրա հետեւանքը եղաւ այն, որ ծայր տուեց մի շարք մասնաւոր նուիրատուութիւնների Ճեմարանում թօշակաւոր աշակերտներ պահելու նպատակով։

Այս բոլորով հանդերձ, 1848 թուի Կանոնագիրը ունէր խոշոր պակասներ եւ չբերեց այն, ինչ որ համարւում էր բաղձալի եւ անհրաժեշտ՝ Կրթական ծրագրի մէջ մտցնել ներդաշնակութիւն ու նրա հետապնդած աւանդական նպատակների պահպանութիւնը։

Ճեմարանի աւանդական հիմնական նպատակն էր՝ տալ իր սաներին պնպիսի լուրջ կրթական պատրաստականութիւն, որ նրանք կարողանային անարգել՝ առանց քննութեան ստանալ բարձրագոյն՝ համալսարանական ուսում։ 1848 թ. Կանոնագիրը հետապնդում էր դրան միանգամայն հակառակ նպատակի։ Մի շարք արտօնութիւններ տալով, նա ջանում էր աւելի մեծ զարկ տալ արեւելեան լեզուների ուսումնասիրութեան, հարկադրել աշակերտներին նուիրուել այդ մասնագիտութեան, գերադասել այն համալսարանական կրթութիւնից։ Կառավարութիւնը պէտք ունէր արեւելեան լեզուներ իմացող պաշտօնեաների՝ գործելու գիւանագիտական ասպարէզում. պէտք էին թարգմաններ, պէտք էին պետական կեանքի մի շարք մարզերում ծառայողներ։

«1848 թ. մայիս 10ի Կանոնագրով. — ասում է վերատեսուչ Պրոֆ. Վ. Միլլէրը, — 5 դասարանոց Լազարեան Ճեմարանը բարեփոխուեց ու վերածուեց 8 դասարանոց դպրոցի, որի առաջին վեց դասարանները

գիմնազիոնական դասընթացք պիտի ունենային եւ երկու լիկէոնական։ Սակայն առաջին երկու տարեւեղեան լեզուները աւանդւում էին նաեւ գիմնազիոնական դասարաններում ընդհանուր կրթական առարկաների հետ միասին եւ շարունակում են աւելի մասնագիտականօրէն ուսումնասիրուել լիկէոնական դասարաններում։ Երկու բաժանմունքների ծրագիրը չափազանց խայտաբղէտ էր. այն ակնկալութիւնները, որ սպասւում էին Նոր Կանոնագրով մտցրուած բարեփոխութիւնից, չարդարացան։ Ճեմարանի սաները նախկին ձեւով ձգտում էին համալսարան մտնել. արեւելեան լեզուներով լուրջ զբաղուողների թիւը չատ սահմանափակ էր. չատերը այդ պարտադրմունքների վրայ նայում էին որպէս մի տհաճ պարտականութեան վրայ, քանզի որպէս Կովկասեան որդեգիրներ, կաչկանդուած էին. այս իսկ պատճառով գիմնազիոնական դասարաններում արեւելեան լեզուների դասաւանդութիւնը արդիւնաւէտ չէր։ Հետզհետէ Ճեմարանի Խորհուրդի մէջ կարծիք է ստեղծւում, որ անհրաժեշտ է վերաքննութեան ենթարկել Ճեմարանի Կանոնագիրը[2]»։

Նոյն կարծիքն ունի նաեւ Գ. Քանանեանը։

«17 տարուայ փորձը (1848—1865), — ասում է նա, — ցոյց տուեց, որ Նոր Կանոնագրի հիմնական միտքը՝ խրախուսել Ճեմարանի աշակերտներին զբաղուել արեւելեան լեզուներով եւ չնայած նրանց տրուած բազմաթիւ առանձնաշնորհումներին, որոնք նպատակ ունէին յետ պահելու աշակերտներին համալսարան մտնելուց, — 17 տարուայ փորձը համոզեցուցիչ կերպով ապացուցեց, որ Ճեմարանի աշակերտների մշտական ցեց, որ Ճեմարանի աշակերտների մշտական ձգտումը դէպի համալսարան մնացել է անխախտ»։

«Նոր Կանոնագրի ընդհանուր վերաքննութիւնը եւ ծրագրի էական բարեփոխութիւնը մեր դպրոցի ամենաչօշափելի պատիժն էր կազմում[3]»։

1848 թուի Կանոնագրի այս պակասաւոր կողմերը, ի հարկէ, դուրսը, հասարակական շրջաններում. չէին գիտակցւում. նրանք գոհ էին, որ Ճեմարանը հոչակուած է բարձրագոյն դպրոց, եւ որ նա ստացել է մի շարք առանձնաշնորհումներ եւ իրաւունքներ։

[2] Տե՛ս «Լազ. Ճեմ. 30ամեակը», էջ Ե, Պրոֆ. Միլլէրի ճառը։
[3] Տե՛ս «Լազ. Ճեմ. 50ամեակը», Գ. Քանանեանի ճառը, էջ 31։

Հասարակութիւնը իր այդ տրամադրութիւնը արտայայտեց դրամական նուիրատուութիւններով՝ մասնաւոր թոշակաւորներ պահելու Ճեմարանում։

1. Դեռ 1842 թ. Մոսկուայի հայ վաճառական Եսայի Գասպարեանը նուիրել էր 50.000 ռուբլի, որպէս զի երկու որբ հայ երեխաներ հայ առեւտրականներից ուսանեն Ճեմարանում որպէս իր որդեգիրներ։

Կայսրը արձագանգում է այս նուիրատուութեան, տալիս է իր հաւանութիւնն եւ պարգեւատրում Գասպարեանին Ս. Ստանիսլաւի շքանշանով։

Ուշադրաւ է նուիրատուի պատճառաբանութիւնը. նրա դիմումի մէջ, ի միջի այլոց, ասուած է.

«Զբաղուելով մի քանի տարի առեւտրով Ասիայի հետ եւ զգալով, թէ որքա՜ն մեծ օգուտներ կարող էր ստանալ այդ առեւտրից Ռուսաստանը, եթէ այդ առեւտուրը կատարուէր կրթուած վաճառականների ձեռքով իմ հայրենակիցներից, ես որոշեցի եւ այլն»։

2. 1849 թ. Թիֆլիսի քաղաքացի Յովհաննէս Մնացականեանը նուիրում է 15.000 ռ. 2 որդեգիր պահելու Ճեմարանում Անդրկովկասի հայ չքաւոր ընտանիքների զաւակներից իր անունով։ Կայսրը հաստատում է այս նուիրատուութիւնն եւ հրամայում յայտնել նուիրատուին Ն. Կ. Մ. շնորհակալութիւնը։

3. 1857 թուին իշխան Քարաման Արղութեան–Երկայնաբազուկն է նուիրում 11.340 ռ. արծաթ. մի որդեգրի համար իր անունով. որդեգիրը պիտի ընտրուէր Անդրկովկասի հայ չքաւոր ազնուականներից կամ չքաւոր իշխաններից։ Այս նուիրատուութիւնն եւս ընդունւում է եւ գործադրութեան մէջ դրւում։

4. 1864 թ. Յովհաննէս Դաւթեան Դելեանովը եւ նրա ամուսինը նուիրում են 10.000 ռ. արծաթ. 2 որդեգիր պահելու իրենց վաղամեռիկ որդի Քրիստափոր Դելեանովի անունով չքաւոր երեխաներից։

5. 1866 թ. Մոսկուայի փոքրաթիւ հայ համայնքը նուիրում է 6000 ռուբլի հաւաքած հանգանակութեամբ, ի յիշատակ կայսր Ալէքսանդր Բ.ի հրաշագործ փրկութեան 1866 թ. ապրիլ 4ին, մի որդեգիր պահելու Ճեմարանում, թոշակը պիտի անուանուէր «Ալէքսանդրեան» եւ տրուէր Ճեմարանում սովորող սաներից ամենաընդունակին։

© National Library of Armenia

6. 1867 թ. Ճեմարանի հոգաբարձու Խաչատուր Յովակիմեան Լազարեանցը ի յիշատակ կայսեր ու թագաժառանգի այցելութեան, տրուած Ճեմարանին, ինչպէս եւ թագաժառանգի եւ նրա ամուսնու մեծ իշխանուհի Մարիա Ֆէոդորովնայի առաջին այցելութեան Մոսկուային, նուիրում է 10.000 ռ. 2 որդեգրի համար ռուս ազնուականներից ու պետական պաշտօնեաներից: Մէկ թոշակը կոչուելու էր «Ալէքսանդրեան», միւսը՝ «Ալէքսանդրեան-Մարիինսկի»:

7. 1867 թ. Եգոր Թամամշեւը, Թիֆլիսեցի, մահից առաջ կտակով նուիրում է 10.000 ռուբլի մի որդեգիր պահելու Ճեմարանում իր անունով: Որդեգիրը պիտի ընտրուէր Անդրկովկասի հայ չքաւոր ազնուականներից կամ միւս դասակարգերից, գերադասելի են որբ երեխաները:

8. 1870 թ. այրի տիկին Ելիզաբէթ Յովակիմեան Հայրապետովայ, ծն. Լազարեանը, նուիրում է 10.600 ռուբլի մի գիշերօթիկ եւ 2 կէս-գիշերօթիկ որդեգիրներ հայ որբերից պահելու Ճեմարանում: Թոշակաւորները պիտի անուանուէին՝ «Որդեգիրներ Ելիզաբէթ Յովակիմեան Հայրապետովայի, ծն. Լազարեանի»:

9. 1873 թ. Պետական Խորհրդական Յովհաննէս Գրիգորեան Ամիրովի կտակի համաձայն կտակարարները նուիրում են 15.000 ռ. 2 որդեգրի համար հայ չքաւոր երեխաներից, որդեգիրները կոչուելու էին «Ամիրովի որդեգիրներ»:

10. 1879 թ. Զօրավար Մ. Դ. Սկոբելեւի անուան թոշակ:

Կալուգայի Նահանգական Ազնուականութիւնը ի նկատի առնելով զօրավար Սկոբելեւի մատուցած մեծ ծառայութիւնները հայրենիքին, նուիրում է 6000 ռուբլի մի որդեգիր պահել նրա անուան մի որեւէ բարձրագոյն դպրոցում: Զօրավարը ցանկութիւն է յայտնում, որ նուիրատուութիւնը արուի Լազարեան Ճեմարանի Լիկէոնին:

11. 1880 թ. այրի տիկին Եկատերինա Էմմանուէլովնա Լազարեանը (ամուսինը Հոգաբարձու Խաչ. Լազարեանի) — մահից առաջ կտակով նուիրում է 40.000 ռուբլի իր անունով 5 որդեգիրներ պահել Լազ. Ճեմարանում, երկու որդեգիր ռուսահպատակ չքաւոր հայերից եւ 3 որդեգիր օտարահպատակ չքաւոր հայերից:

12. 1868 թուին ռուսահայերի մէջ միտք է յղանում Լազարեան Ճեմարանի հարցաքննութիւնների չքեղ դահլիճում դնել վերջին հոգաբարձու Խաչատուր Լազարեանի մարմարէ կիսանդրին եւ պահել Լազարեանների անուան մի որդեգիր Ճեմարանում ի պատիւ այն մեծամեծ բարիքների, որոնք մատուցուած են այդ հոյակապ տոհմի կողմից: Հանգանակութեամբ հաւաքւում է 2459 ռուբլի:

Հոգաբարձուի մահից յետոյ՝ 1883 թ. ի կատար է ածւում հայերի այդ ցանկութիւնները:

13. 1876 թ. եւ 1878 թ. Արքեպիսկոպոս Սարգիս Հասան-Ջալալեանը մահից առաջ երկու կտակով թողնում է 25.000 ռուբլի արծաթ., որպէս զի 125 տարուց յետոյ, երբ այդ դրամագլուխը աճելով կը կազմի 12,000.000 ռուբլի, ապա այդ գումարի տոկոսներով հիմնել եւ պահել դպրոցներ հայ երեխաների համար: Հանգուցեալը մահից առաջ ցանկութիւն է յայտնում, որ կտակուած գումարը յանձնուի Լազարեան Ճեմարանին, որն եւ պիտի հսկողութիւն ունենայ ժամանակին իրագործելու հանգուցեալի կտակը:

Հանգուցեալի կտակակատարները դրամը յանձնում են Ճեմարանին 1882 թ.:

14. 1888 թ. Համաձայն հանգուցեալ Պետական Խորհրդական Դանիէլ Գաբրիէլեան Քանանեանի կտակի՝ Լազ. Ճեմարանում հաստատւում է մի որդեգիր «Քանանեան» անունով: Հանգուցեալը, ինչպէս երեւում է 1866 թ. Վլատիկաւկազի դատախազի գրութիւնից, կտակել էր 10.000 ռուբլի, որպէս զի այդ գումարի տոկոսներով մի որդեգիր պահուի իր անունով Ճեմարանում եւ մրցանակ տրուի լաւագոյն աշխատանքի համար Հայոց գրականութեան մասին: Որդեգիրը պիտի լինէր Ղզլարի չքաւոր հայ երեխաներից, գերապատուութիւն տալով Քանանեան տոհմի երեխաներին:

15. 1887 թ. Տոհմական պատուակալ քաղաքացի Գրիգորիյ Եակովլեւիչ Մատվէեւը մահից առաջ կտակում է 12.700 ռ., Լազ. Ճեմարանին, որպէս զի նրա տոկոսներով իր անունով մի որդեգիր պահուի: Որդեգիրը պիտի ընտրուի նախապատուութիւն տալով Մատվէեւի տոհմի երեխաներին, հակառակ դէպքում, ուրիշ տոհմի երեխաներից, Ճեմարանի ռուս ուղղափառ դաւանանքին պատկանող սաներից:

16. 1887 թ. այրի տիկին Եկատերինա Գաշեւսկին նուիրում է 7000 ռ. մի որդեգիր պահելու Ճեմարանի սան իր հանգուցեալ որդի Յակոբ (Եակով) Գաշեւսկու անունով: Որդեգիրը պիտի ընտրուէր ռուս չքաւոր ազնուականների որբերից:

17. 1888 թ. համաձայն կտակի հանգուցեալ Ալէքսանդր Մելիքսեթէկով Տէր-Յակոբեանի հաստատւում է Ճեմարանում մի որդեգիր նրա անունով, որի համար նուիրաբերուած է 10.000 ռուբլի: Համաձայն կտակի, որդեգիրը պիտի ընտրուէր Գորի քաղաքի չքաւոր հայ երեխաներից:

18. 1890 թ. հաստատւում է Հաշտարխանի բնակիչ Եսայի Էդելյանովի կտակի համաձայն նրա անուան որդեգիրներ Լազ. Ճեմարանում Հաշտարխանի չքաւոր հայ երեխաներից, թուով այնքան, որքան նուիրաբերուած 36.900 ռուբլի գումարի տոկոսները կը թոյլատրեն:

Բացի այս մասնաւոր անձանց որդեգիրներից, Լազարեանները ունեցել են Ճեմարանում, նրա հիմնադրութեան առաջին իսկ օրուանից, 30 որդեգիրներ, որոնց թիւը աստիճանաբար աճելով 90ական թուականներին հասել էր 44ի:

Առանձին գաւառական հայ համայնքներ եւս ունեցել են որդեգիրներ Լազարեանների հաշուին:

Այսպէս, Նոր Ջուղայի պատմիչ Յարութիւն Տէր-Յովհաննեանը հաղորդում է, որ Ն. Ջուղայի Թադէոս արքեպիսկոպոսի խնդրանօք Լազարեանները ընդունում են իրենց որդեգիրների շարքը երկու Ջուղայեցի երեխաներին: 1857 թ. սեպտեմբերի սկզբին Մոսկուա են հասնում եւ մտնում Ճեմարան երկու Ջուղայեցի մանուկներ՝ Մարտիրոս Յովհաննէսեան եւ Աբգար Հայրապետեան:

Վ. Ագուլիսի (Գողթան) հայ համայնքն էլ ունեցել է երկու որդեգիրներ, կրկին Լազարեանների հաշուին: Ժամանակի ընթացքում երկուսը դարձել էր մէկ:

1887 թ. Վ. Ագուլեցի Մկրտիչ Բարխուդարեանը (յետագայում խմբագիր «Հանդէս գրականութեան ու պատմութեան»ի) աւարտելով Ճեմարանը, վերադառնում է իր ծննդավայրը եւ նրա փոխարէն ընտրւում է Ծխական դպրոցի աշակերտ Յովսէփ Թադէոսեանը (տոդերիս գրողը), որը մեկնում է նոյն թուի Օգոստոս մէկին Մոսկուա: Սրան ընդունում է ագուլեցի, յայտնի հասարակական գործիչ Մելքոն Փանեանը որ այդ ժամանակ Մոսկուայի Հայոց Ս. Խաչ եկեղեցու երէցփոխ էր, եւ տեղաւորում նրան Ճեմարանում:

Ցաւօք սրտի, մենք տեղեկութիւն չունենք՝ թէ ո՞վ է եղել Մկրտիչ Բարխուդարեանից առաջ եւ ո՞վ է փոխարինել Յովսէփ Թադէոսեանին, 1895 թուին երբ նա աւարտում է իր ուսումը Ճեմարանում, վերջապէս, ե՞րբ է Վ. Ագուլիսի հայ համայնքը այդ արտօնութիւնը ստացել Լազարեաններից:

Հայ հասարակութեան գնահատելի վերաբերմունքն եւ մանաւանդ նրա նախկին սաների երախտագիտական զգացումները հանդէպ իրենց alma mater-ի փայլուն արտայայտութիւն է ստանում 1850 թուին, երբ Թիֆլիսի աչքառու հայ քաղաքացիներն ու Ճեմարանի նախկին սաները, գլխաւորութեամբ Ներսէս Ե. կաթողիկոսի եւ մասնակցութեամբ Սարգիս վարդապետ Ջալալեանցի ու կարապետ վարդապետ Շահնազարեանցի, նուիրաբերում են Ճեմարանին 74 հատ հազուագիւտ ձեռագիրներ եւ հայերէն թանկարժէք գրքեր:

Այդ առթիւ նուիրատուները ուղղել էին Ճեմարանի հոգաբարձու Յովհաննէս աղա Լազարեանին հետեւեալ ոգեշունչ նամակը Ճեմարանի նախկին սան Ստեփան Մատինեանի ստորագրութեամբ.

«Շատ տարիների ընթացքում Թիֆլիսի հին գրքերի առեւտրականներն ու եղբարք էնֆիալջեանները, հաւաքելով հայկական հնութիւններ, կազմել են շատ թանկարժէք եւ հազուագիւտ գրաղարան հայկական ձեռագիրներ: Վենետիկի, Կալկաթայի եւ Զմիւռնիայի հայ գիտական ընկերութիւնները գրագրութեան մէջ էին ձեռք բերելու այդ ձեռագիրները:

«Մենք, Ձեր նախկին սաները, միշտ պահպանելով երախտագիտութեան անչէջ զգացումներ դէպի մեր կրթութեան հեղինակները, վաղուց երազում էինք արտայայտել մեր երախտագիտութեան զգացումները մի ընդհանուր քայլով առ մեր բարերարները: Ցոյս չունենալով իրագործել մեր մտադրութիւնը մի գործով, որ արժանի լինէր Ձեր բարձր անձնաւորութեան ուշադրութեանը, մենք ձեռք բերինք այս թանկագին

* Տե՛ս յիշեալի «Պատմ. Ն. Ջուղայու», էջ 105:

© National Library of Armenia

ձեռագիրները նուիրաբերելու նպատակով Ձեր ձեմարանին, որի ներսում մենք ստացել ենք մեր բարոյական դաստիարակութիւնն ու մտաւոր զարգացումը, որը կազմում է մեր կեանքի երջանկութեան հիմը: Թիֆլիսի հայ պատուաւոր քաղաքացիներից շատերը իմանալով մեր մտադրութիւնը, թախանձանօք խնդրեցին թոյլ տալ բերելու նաեւ իրենց մասնակցութիւնը մեր այս համեստ ձեռնարկին, ցանկանալով Ձեր սաների հետ միասին արտայայտել իրենց խոր յարգանքի եւ անկեղծ երախտագիտութեան զգացումները դէպի Ձեր տոհմն ու Ձեր անձնաւորութիւնը Ձեր այն անխոնջ խնամքի համար, որ Դուք ունեցել էք Հայկազեան երիտասարդութեան դաստիարակութեան ու յառաջադիմութեան մասին: Եւ ամէնքը յանձնարարեցին ինձ, որպէս առաջին ընթացաւարտ. սան, որը խորին ակնածութեամբ յիշում է Ձեր երջանկայիշատակ հօր՝ Յովակիմ Լազարեանի ծնողական խնամքը մեր մասին, — խնդրել Ձերդ գերազանցութիւնը ընդունել Ձեզ յատուկ նեղոդամտութեամբ այս ձեռագիրները, ո՛չ որպէս նուէր, այլ որպէս երախտագիտութեան արտայայտութիւն բոլոր հայերի առ Ձեզ, որպէս զեղումն որդիական սիրոյ իրենց բարերար–հօր հանդէպ»:

Նամակը ստորագրել են 91 հոգի, որոնց թւում կան, բացի վերը յիշածներից, նաեւ իշխան Քարաման Արղութեան–Երկայնաբազուկը, իշխան Վասիլի Արղութեան–Երկայնաբազուկը, Լորիս–Մելիքովը, Ռուսաստանի ազգայ զեկտատորը, Պետրոս Շանշեանը, Ներսիսեան դպրոցի տեսուչը, եւ այլն: Կարելի է ասել, որ Թիֆլիսի այդ ժամանակուայ հայ հասարակութեան ընտրանին էր բերել իր մասնակցութիւնը[5]:

Իրենք՝ Լազարեաններն էլ ամէն կերպ ջանում էին ժողովրդականացնել իրենց դպրոցը ու բարոյական կապեր հաստատել հայ, ռուս ու եւրոպական ականաւոր անձանց հետ:

Այս նպատակով նրանք պատուակալ անդամներ էին ընտրում բոլոր նրանց, ովքեր այս կամ այն ձեւով ու գործով արտայայտել էին իրենց բարեացակամ վերաբերմունքը ձեմարանի հանդէպ:

[5] Տե՛ս «Լազ. ձեմ. 50ամեակը», Ցուցուած, էջ 84—86:

Եւ ձեմարանը 1865 թուին արդէն ունէր 108 հոգի պատուակալ անդամներ, ընտրուած աշխարհի բոլոր ծագերից ու ազգերից:

Այդ անուանացուցակի մէջ նշմարելի տեղ են գրաւում հայ եւ օտար գիտնականներ, հայ բարձրաստիճան հոգեւորականներ ու պետական բարձր պաշտօնեաները:

*

Այս ժամանակաշրջանում տեղի է ունենում մի ողբերգական դէպք, որ անհուն վիշտ է պատճառում Լազարեանների ամբողջ գերդաստանին ու հայ հասարակութեան, բայց որը միաժամանակ տխուր առիթ է ծառայում մի նոր կրթական մեծարժէք ձեռնարկի սկզբնաւորութեան ձեմարանում:

1850 թ. վախճանւում է Խաչատուր Յովակիմեան Լազարեանի մինուճար զաւակը՝ տոհմի շարունակող միակ ժառանգը՝ մանուկն Յովհաննէս Խաչատուրեան Լազարեանը...:

Վշտահար ծնողները որոշում են յաւերժացնել նրա յիշատակը եւ նուիրում են 60·000 ռուբլի արծաթ (180·000 ռուբլի թղթադր.) բանալու մի նախակրթարան դասարան նրա անունով:

1851 թ. Փետրուար 7ին հայրն ու հօրեղբայրը՝ Յովհաննէս Լազարեանը, գրաւոր դիմում են կատարում գլխաւոր կառավարչապետ կոմս Օրլովին եւ յայտնում իրենց ցանկութեան մասին:

Այդ նամակի մէջ ասուած էր.

«Զրկուելով մեր միւնուճար ժառանգից, փոքրահասակ Յովհաննէս Լազարեանից, որը մեր տոհմի շարունակողի յոյսն էր մեզ ներշնչում եւ միաժամանակ պիտի լինէր իր նախահայրերի սկսած բարի գործերի շարունակողը, մենք որոշեցինք հանգուցեալի անունից նուիրել 60·000 ռ. արծաթ, որպէս զի ձեմարանում բացուի մի նախակրթարան դասարան, ուստի վստահանում ենք ցանկութիւն յայտնել, որ այդ բաժանմունքը, որը հիմնուելու է նրա յիշատակին, կրի՝ «Նախակրթարան բաժանմունք մանուկ Յովհաննէս Լազարեանի անունը»:

Այս գիմումը յարգւում է. կայսրը տալիս է իր հաւանութիւնը եւ 1851 թ. Փետրուար 10ին սկիզբ է առնում այդ նոր կրթական ձեռնարկը, իր ներքին Կանոնագրով ու ուսումն. յատուկ ծրագրով:

II.

1848 թ. Նոր Կանոնագիրը, ասացինք, չնայած իր մի շարք մեծ առաւելութիւններին, այնուամենայնիւ նա չէր լուծում ձեմարանի կրթական ծրագրի բարեփոխման հետ կապուած բոլոր խնդիրները: Նրա վերաքննութեան պահանջը շատ շուտ զգացուեց:

Մասնաւորապէս բաւարարուած չէր ձեմարանի վերջին հոգաբարձուն՝ ծերունի Խաչատուր Լազարեանը: Որքան նրա տարիքը յառաջանում էր, այնքա՛ն զօրանում էր նրա մէջ մտահոգութիւնը ձեմարանի ապագայի նկատմամբ ու նրա վերջնական նպատակայարմար ծրագրի մասին:

Ձեմարանի յարատեւութեան միակ գրաւականը նա տեսնում էր միայն մի միջոցի մէջ՝ ենթարկել ձեմարանը ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան եւ նրա անմիջական ղեկավարութեան:

Այս միտքն ու բաղձանքը նոր չէին. այդ միտքը յղացել էր դեռ նրա հայրը՝ Յովակիմ աղան, բայց այդ ուղղութեամբ նրա թափած ջանքերը յաջողութեամբ չէին պսակուել...:

Ձեմարանը արդէն բոլորում էր իր 50ամեակը, բայց դեռ գտնում էր անորոշ վիճակում թէ իրական տեսակէտից, թէ կրթական ծրագրի մէջ ներդաշնակութիւն մացնելու անհրաժեշտութեան կողմից:

Նոյն մտահոգութիւններն ունէր նաեւ ձեմարանի նոր գլխաւոր կառավարչապետ Վլադիմիր Բուտկովը, որ յաջորդել էր կոմս Օրլովին 1860 թուին:

Վ. Բուտկովի ուշադրութիւնից չսպրդեց այն շատ կարեւոր հանգամանքը, որ Ռուսաստանի ընդհանուր բարենորոգումների շարքում Ալէքսանդր Բ. կայսեր օրօք, արդէն կայսեր կողմից հաստատուած էր եւ հրատարակուած Նոր դպրոցական կանոնագիր ամբողջ կայսրութեան բոլոր գիմնազիոնների համար. ըստ այդ Կանոնագրի գիմնազիոնների շրջանաւարտները իրաւունք էին ստացել առանց քննութեան մտնելու համալսարան: Արդ, եթէ ձեմարանը շարունակէր դուրս մնալ կայսրութեան միջնակարգ դպրոցների ցանցից, ապա նրա ուսումնաւարտները չկիսի կարողանային անարգել մտնել համալսարան...:

Այս հանգամանքը ի նկատի առնելով, ծերունազարդ հոգաբարձուն պատուիրում է ձեմարանի վերատեսուչ Պրոֆ. Բաբատին, որ 1864 թ. Մայիս 23ից այդ պաշտօնի մէջ էր, — կազմել իր նախագահութեամբ յատուկ յանձնաժողով մշակելու ձեմարանի համար Նոր կանոնագիր, համաձայնեցնելով ձեմարանի ուսումն. ծրագիրը 1864 թ. ընդհանուր դպրոցական ծրագրի հետ:

Յանձնախմբի անդամներն էին՝ Պրոֆ. Մ. Լիմինը, Պրոֆ. Սա. Նազարեանցը, Պրոֆ. Տիխօնրաւովը, տեսուչ Գ. Քանանեանը եւ երկու ռուս աւագ ուսուցիչներ:

Յանձնախումբը սկսեց իր աշխատանքները 1864 թ. Նոյեմբերին եւ եկաւ այն եզրակացութեան, որ ձեմարանը պիտի պահպանի իր մասնագիտական նպատակը՝ արեւելեան լեզուների դասաւանդութիւնը՝ պատրաստելու երիտասարդ ուսանողներին ծառայելու Արեւելքում, միաժամանակ պիտի նախկին ձեւով ունենայ իր գիմնազիոնական դասընթացքը. միայն վեց դասարանների վրայ աւելացնել նաեւ եօթներորդը. բացի լատիներէնից աւանդել նաեւ յունարէնը եւ այդպիսով ձեմարանի գիմնազիոնական բաժինը հաւասարեցնել պետական գիմնազիոններին, համաձայն 1864 թ. Պետական դպրոցների Նոր Կանոնագրի, որով ձեմարանի աշակերտները հնարաւորութիւն կ'ունենան անարգել, առանց յատուկ քննութեան, շարունակել իրենց կրթութիւնը համալսարանում:

Արեւելեան լեզուների դասաւանդութեան նկատմամբ Յանձնախումբը գալիս է այն եզրակացութեան, որ նրանց դասաւանդութիւնը Գիմնազիոնական դասարաններում պիտի խնայող վերացնել եւ կենտրոնացնել յատուկ մասնագիտական դասարաններում Լիկէոնում, եւ որպէս զի այդ լեզուները հիմնովին իւրացուին, երկու տարուայ դասընթացքը վերածել երեք տարուայ դասընթացքի:

Կրթական գործի միայն նման կազմակերպութեամբ ձեմարանը ի վիճակի կը լինի լրիւ ու պատշաճ ձեւով իրագործել իր հիմնական երկու նպատակները՝ տալ իր սաներին լրիւ ու լուրջ միջնակարգ կրթութիւն եւ ապա արեւելեան լեզուների ուսումնասիրութիւնը դնել ամուր հիմքերի վրայ: Այս պայմաններում միայն ձեմարանը իրագործած կը լինի իր հիմնադիրների ի սկզբանէ հետապնդած նպատակները ու նաեւ յարատեւել իր գոյութիւնը, դուրս գալով իր իրական ներկայ խախուտ վիճակից:

Յանձնախումբը միաժամանակ վերացրեց հոգեւորականներ պատրաստելու առանձնա-

© National Library of Armenia

յատուկ ծրագրի կիրառումը գիմնազիոնական բաժնում, արտայայտելով այն առողջ միտքը՝ որ հոգեւորական դասի համար պատրաստուող սաներն եւս պիտի ունենան լուրջ մասնաւոր զարգացում եւ ընդհանուր կրթութիւն, քանզի ինչպէ՞ս կարելի է լինել կըրթուած ու արժանաւոր հովիւ իր հօտի համար առանց լրիւ միջնակարգ՝ գիմնազիոնական ուսումի:

Յանձնախումբը, ներկայացնելով իր այս բարենորոգչական ծրագիրը, հրաւիրեց Հոգաբարձուի ուշադրութիւնը այն հանգամանքի վրայ, որ նրա կիրառումը կը պահանջի նոր յաւելեալ դրամական միջոցներ, մինչդեռ ճեմարանը չունի այդ միջոցները պահանջուած ծախսերը հոգալու:

Խաչատուր Լազարեանը անմիջապէս (Մարտ 25ին 1865 թ.) յայտնեց ճեմարանի վարչութեան, որ նուիրում է ճեմարանին 200·000 ռուբլի այդ յաւելեալ ծախսերը ծածկելու համար:

Այս խոշոր նուիրատուութիւնը խոր տպաւորութիւն է թողնում ճեմարանի թէ վարչութեան եւ թէ Յանձնախմբի անդամների վրայ եւ ապա արժանանում նաեւ կայսեր ուշադրութեան, որ չի յապաղում պարգեւատրել նուիրատուին Սպիտակ Արծուի շքանշանով:

«Այս ծրագիրը, — ասում է վերատեսուչ Պրոֆ. Վ. Միլլէրը — պէտք էր առանց յապաղման գործադրել, քանի որ 1864 թ. գիմնազիոնների Նոր Կանոնագիրը մտել էր իր ոյժի մէջ եւ ճեմարանին վտանգ էր սպառնում՝ զրկուել իր ընթացաւարտ աշակերտներին համալսարան ուղարկելու իրաւունքից: Այս իսկ պատճառով ճեմարանի գլխաւոր Կառավարչապետ Բուտկովի թոյլտուութեամբ սկսուեց Նոր Կանոնագրի ստիճանական գործադրութիւնը (երկու հին լեզուների՝ լատիներէնի եւ յունարէնի դասաւանդութիւնը) գիմնազիոնական դասարաններում եւ միաժամանակ ստիճանական զատումը այդ դասարաններից արեւելեան լեզուների դասաւանդութիւնը, որոնք պիտի կենտրոնային բարձրագոյն կամ Մասնագիտական դասարաններում [6]»:

Այս բարենորոգումը զուգադիպեց ճեմարանի 50ամեակին, որը Հոգաբարձուն՝ Խաչատուր Լազարեանը ուզում էր մեծ հանդիսաւորութեամբ տօնել, եւ արդէն պատրաստուում էր Պետերբուրգից Մոսկուա գալ եւ ներկայ լինել հանդէսին, չնայած որ հիւանդութիւնից ծերունին շատ էր տառապում: Բայց վիճակուած չէր նրան այդ ուրախութեան մասնակից լինել:

Վախճանւում է այդ ժամանակ Մեծ իշխան գահաժառանգը եւ տօնակատարութիւնը տեղի չի ունենում. յետաձգւում է աշնան՝ Սեպտեմբեր 12ին նոյն 1865 թուին այդ ժամանակ հոգաբարձուն արդէն մեկնել էր արտասահման բուժուելու:

Յոբելենական հանդէսը, թէեւ շատ համեստ կերպարանք ունէր. այնուամենայնիւ մամուլի եւ հասարակութեան ուշադրութեան առարկայ եղաւ: Այսպէս, յայտնի հրապարակախօս Կատկովը իր թերթում՝ «Մոսկուայի Լրաբեր»ում («Մոսկովսկի Վէդոմոստի») գրել էր հետեւեալ ուշադրաւ տողերը.

«Լազարեան ճեմարանը Արեւելեան Լեզուաց տօնեց իր գոյութեան 50ամեակը: Հանդէսը յաւէրժացուած չէր կերուխումով, որը նման դէպքերում սովորական են, եւ չունէր արտաքին փայլ ու շուք, բայց ամենափառահեղ յոբելեաններն իսկ նրա համեմատութեամբ գալիանում են: Հասարակութեան յայտնեցին երկու ծանրակշիռ տեղեկութիւն՝ Հոգաբարձուն զարդարել էր հանդէսը նուիրաբերելով խոշոր գումար՝ 200·000 ռուբլի եւ որ ճեմարանը այդ նուիրատուութիւնը, որ թագաւորական առատաձեռնութեամբ էր արուած, կ'օգտագործի բարեկարգելու այն եւրոպական ձեւով: Կարելի՞ էր, արդեօք, աւելի փայլուն ձեւով տանել մի գլորոցի յոբելեանը»:

*

Նոր Կանոնագրի բարերար ազդեցութիւնը ճեմարանի կեանքի վրայ շատ շուտով արտայայտուեց. ամենից առաջ աշակերտների թիւը սկսեց աճել: 1866—1867 ուս. տարում ճեմարանը ունէր միայն 144 դիշերօթիկ եւ 9 հոգի երթեւեկ աշակերտներ, ընդամէնը՝ 153 հոգի: 1874—1875 ուս. տարում ճեմարանը արդէն ունէր՝ 185 դիշերօթիկ եւ 49 երթեւեկ աշակերտներ, ընդամէնը՝ 234 հոգի:

Բայց մի հիմնական խնդիր մնաց չլուծուած՝ ճեմարանի իրական վիճակը շարունակում էր մնալ անորոշ, որ մեծ անհանգստութիւն էր պատճառում թէ ծերունի հոգաբարձուին եւ թէ հայ հասարակութեան: Խաչատուր Լազարեանը այն տարիքում էր, որ կարող էր անակնկալօրէն կնքել իր մահկանացուն եւ ճեմարանը կը մնար անտէրանտիրական...:

Այս գեանի վրայ առաջ եկաւ հասարակութեան մէջ մտքերի շփոթ...: Ոմանք կարծիք էին յայտնում, որ ճեմարանը պիտի փոխադրել Կովկաս, իսկ ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Դ.ը յայտարարեց, որ Խաչատուր Լազարեանի մահից յետոյ ճեմարանը պիտի ենթարկուի նրա հսկողութեան եւ հովանաւորութեան...:

Այս առաջարկներից է՛ւ ո՛չ մէկը չէր ժպտում իրեն՝ Մ. Լազարեանին:

Այս ծանր մոմենտին մի նոր անակնկալ հարուած իջաւ ճեմարանի գլխին...:

Վերատեսուչ Բարսովը, որ յաճախ արձակուրդներ էր վերցնում ու բացակայում ճեմարանից, իր հրաժարականը տուեց. հոգաբարձուն, թէեւ դառնութեամբ, ընդունեց հրաժարականը:

Միեւնոյն ժամանակ գլխաւոր Կառավարչապետը, առանց խորհրդակցելու ճեմարանի վարչութեան եւ հոգաբարձուի հետ, խորհրդակցելով իր հրաժարականը տուած վերատեսուչ Բարսովի հետ, կայսերական հրամանագրով հրատարակում է 1868 թ. Ապրիլ 14ին հետեւեալ որոշումները:

1. Թողնել Լազարեան ճեմարանը իր ներկայ պայմաններում մինչեւ հոգաբարձուի վախճանը, իսկ նրա մահից յետոյ ճեմարանը իր ամբողջ շարժական ու անշարժ ունեցուածքով, որ պիտի կազմի նրա անձեռնմխելի սեպհականութիւնը, փոխանցել ժողովրդ. լուսաւորութեան նախարարութեան, մտցնելով ճեմարանը այդ մինիստրութեան դպրոցական ցանցի մէջ:

2. Ընդ միշտ պահպանել նրա Լազարեան անունը:

3. Թողնել անձեռնմխելի ներկայումս գոյութիւն ունեցող թոշակների քանակը, սահմանուած հայ չքաւոր երեխաների համար:

4. Այժմեան հոգաբարձուի փոխարէն հաստատել պատուակալ հոգաբարձուի կոչում եւ այդ կոչումը վերապահել Լազարեանների տոհմի աւագ անդամին:

5. Ճեմարանի կրթական ծրագրի մէջ մտցնել լատիներէնի եւ յունարէնի դասաւանդութիւնը հանդերձ պետական գիմնազիոնների լրիւ դասընթացքով եւ կիրառել այն բոլոր որոշումները, որոնք նախատեսուած են 1864 թ. Նոր Կանոնագրով:

Եւ ո՛չ մի խօսք արեւելեան լեզուների մասին. պարզ էր, որ այդ որոշումների հեղինակները վերացրել էին այն ու ճեմարանը վերածել մի հասարակ միջնակարգ դպրոցի...:

Այդ որոշումների հրատարակութիւնը առաջ բերին մեծ արտունչներ հասարակութեան ու մամուլի մէջ եւ շատ ծանր տպաւորութիւն թողին ճեմարանի վարիչների վրայ...:

«Այսպիսով, — ասում է վերատեսուչ Պրոֆ. Միլլէրը, — այս բարենորոգումների ծրագիրը, որ մշակուած էր Մոսկուայում եւ որը նպատակ ունէր պահպանել արեւելեան լեզուների դասաւանդութիւնը, զատելով նրանց մասնագիտական դասարաններում, կանգ առաւ էջս ճանապարհին: Լիկէոնական դասարանները ստիճանաբար պիտի փակուէին եւ ճեմարանը պիտի դառնար Մոսկուայի գիմնազիոններից մէկը...:

«Այս անակնկալ տնօրինումը ճեմարանի ճակատագրի եւ արեւելագիտութեան ոչոքի չբաւարարեց՝ ամէն կողմից է՛ւ հասարակական շրջաններում է՛ւ մամուլի մէջ բարձրացան արտունչներ արեւելեան լեզուների դասաւանդութեան վերացման պատճառով, մի բան, որը կարիք ունէր բարեփոխութեան եւ ո՛չ ջնջելու: Ճեմարանի կրթական ծրագրի անհերդաշնակութիւնը եւ նրա բազմաղանութիւնը խաթարում էին ընդհանուր կրթական գործը, բայց եւ այնպէս իր գոյութեան մի շարք տարիների ընթացքում ճեմարանը պահպանում էր արեւելեան լեզուների ուսումնասիրութիւնը եւ տուել է լաւ պատրաստուած պաշտօնեաներ վարչական ու դիւանագիտական մարզերում Արեւելքում (անուանենք հէնց Պոլսոյ մեր այսօրուայ արտակարգ դեսպան Զինովեւին, որ մեր Լիկէոնի 1851 թ. շրջանաւարտներից է եւ պարկական գրականութեան մագիստրոս). միաժամանակ ճեմարանը իր շուրջն էր հաւաքել արեւելագէտ պրոֆեսորներ ու դասատուներ. դրա հետ միասին ճեմարանը ապրել էր իր եկամուտներով եւ առանց դրամական օժանդակութեան Կառավարութեան կողմից:

«Բարեբախտաբար ճեմարանի համար, այս տխուր կացութիւնը երկար չտեւեց: Շնորհիւ նոր վերատեսուչ Նիկոլայ Դաւիդովիչ Դելեանովի որն իր պաշտօնի մէջ մտաւ

[6] Տե՛ս «Վ. Ճ. 30ամեակը», էջ 2—է:

© National Library of Armenia

1869 թ. ապրիլին եւ նա մանաւանդ տեսուչ Գէորգ Քանանեանի եռանդին, ինչպէս եւ ազդեցիկ աջակցութեան ձեմարանի Նոր Գլխաւոր Կառավարչապետ եւ միաժամանակ Ժողովրդ. Լուսաւորութեան Նախարար կոմս Դեմետրի Անդրէեւիչ Տոլստոյի[7] ձեմարանի եւ արեւելագիտութեան ճակատագիրը որոշուեց ամենաբարեյաջող կերպով:

«Կոմս Տոլստոյը, լսելով Գ. Քանանեանի զեկոյցը, պատրաստուած ձեմարանի Խորհուրդի կողմից, մեծ համակրանքով վերաբերուեց արեւելեան լեզուների դասաւանդութեան եւ ձեմարանի իրաւունքների վերանորոգման խնդրին: Արդիւնքը եղաւ այն, որ համաձայն Կոմս Տոլստոյի այդ իմաստով յարուցած բարեխօսութեան 1870թ. Մայիս 30ին Կայսեր բարձրագոյն հրամանը եղաւ՝ «թողնել Լազարեան ձեմարանում Մասնագիտական դասարանները[8]»:

Բայց Գլխաւոր Կառավարչապետը այդքանով էլ չբաւականացաւ. նա ձեմարանի շահերը այնքան իր սրտին մօտ էր առել, որ իր աշխատանքները առաջ տարաւ, որպէս զի միանգամ ընդ միշտ ձեմարանի թէ կրթական ծրագիրն եւ թէ իրաւական վիճակը հաստատուն հիմքերի վրայ դնի:

Կոմսը ժամանում է Մոսկուա 1870 թ. Օգոստոս 21ին. երկու օր նուիրում է ձեմարանի ծանօթութեան չէնքի եւ ապա ձեմարանի պատմութեան հետ կապուած բոլոր փաստաթղթերի մանրամասն եւ ուշադիր ուսումնասիրութեան: Օգոստոս 25ին նա հրաւիրում է ժողովի ձեմարանի վերատեսչին, տեսչին, պրոֆեսորներին եւ դասատուներին. լսում է ամէնքի կարծիքը եւ այնուհետեւ մշակում է ձեմարանի համար նոր դպրոցական Ծրագիր ու Կանոնագիր, որն այնուհետեւ 1871 թ. հաստատւում է բարձրագոյն հրամանագրով: 1870 թ. Հոկտեմբերին բացւում են Մասնագիտական դասարանները նոր հիմունքներով:

«Նոր Կանոնագրի գործադրութիւնը, — ասում է Գ. Քանանեանը — թողեց ամենուրեք շատ մխիթարական եւ ուրախալի տպաւորութիւն. չորս կողմից ստացուեցին ողջոյնի արտայայտութիւններ, որոնց թւում նաեւ ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Դ.ից[9]»:

Այդ տպաւորութեան տակ հայ համայնքները ցանկութիւն են յայտնում դնել ձեմարանի Հարցաքննութեան չքեղ դահլիճում (Актовая зала) ձեմարանի Հոգաբարձուի՝ Խաչատուր Լազարեանի մարմարէ կիսանդրին հանգանակուած դրամով, որն եւ իրագործում են 1870 թուին:

*

Լազարեան ձեմարանի առաջին 50ամեակի համառօտ տեսութիւնը, նրա ապրած զարգացման փուլերի հակիրճ նկարագրութիւնը, որն ստիպուած եղանք հասցնել մինչեւ 1871 թ., որպէս զի ամբողջացրած լինենք ընդհանուր պատկերը, եզրափակում ենք Գ. Քանանեանի խօսքով, ասուած ձեմարանի 50ամեակի հանդիսաւոր հաւաքոյթին՝ 1865 թ. Սեպտեմբեր 12ին:

— «Մենք տեսնում ենք, որ անթիւ էին Լազարեան տոհմի մատուցած ծառայութիւնները ձեմարանին. այդ տոհմի անդամները ո՛չ միայն ստեղծեցին մի մեծ հաստատութիւն յօգուտ ամբողջ հասարակութեան, այլ եւ պահպանեցին այն ամբողջ 50 տարուայ ընթացքում: Միաժամանակ մենք չենք կարող լռութեամբ անցնել այն անձանց բերած ծառայութիւնները, որոնք մեծապէս նպաստեցին մեր դպրոցի ներքին կեանքի զարգացման:

«Հիմնադիրների միտքը դարձնել իրենց հաստատութիւնը իրենց հայրենակիցների բարոյական ու մտաւոր վերածնութեան վայր, պահանջում էր միջոցներ, որոնցից զրկուած էր հայ ազգը, որ քաղաքական ճակատագրի քմայքով կտրուած էր հին ժամանակներում ունեցած իր հարուստ մտաւոր գանձերից: Պէտք էր նորից ստեղծել այդ միջոցները, այդ ուսումնական գործիքները, սովորելու իրենց մայրենի լեզուն ու կրօնը: Ծանր ու դժուարին էր պարտականութիւնը այն անձանց, որոնց վստահացել էին Լազարեան ձեմարանի առաջին սաների կրթութիւնը՝ սովորեցնելու նրանց իրենց մայրենի լեզուն եւ իրենց նախահայրերի հաւատքը: Բայց այդ դժուարութիւնը յաղթահարուած էր գործունէութեամբ ու ջանքերով այն անձանց, որոնք բերին իրենց տաղանդն ու ջանքերը ձեմարանի յառաջադիմութեան գործին: Խօսելով այդ անձանց մասին, մենք չենք կարող չյիշատակել գոնէ մի քանիսներին՝ Սալլանթեանին, Էմինին, Մսերեանցին ու Նազարեանցին: Էմինի հեռաւոր Հնդկաստանից գալն արդէն ապացոյց էր, որ վաղ ժամանակներից սկսած ձեմարանը իրեն ձգող մի ոյժ էր: Ձեմարանում ստանալով իր կրթութիւնը, Պ. Էմինը լիովին հատուցեց իր բարոյական պարտքը իր alma mater-ին: Նա ձեմարանի սաների ձեռքը տուեց դպրոցական ձեռնարկներ իւրացնելու գրաբարն ու Հայոց հին գրականութիւնը, իսկ ռուս գրականութեան նա նուիրաբերեց հայկական դպրութեան եւ պատմութեան յիշատակարանների թարգմանութիւնները: Երախտագիտական խօսք ունինք ասելու նաեւ գիտնական արքեպիսկոպոս Սալլանթեանին, Պ. Մսերեանցին եւ Պն. Նազարեանցին իրենց աշխատանքների ու գործունէութեան համար: Սրանցից իւրաքանչիւրը բարեխղճօրէն եւ ազնուօրէն բերել է իր աշխատանքը յօգուտ այն գործի, որը մատնանշուած է եղել Հիմնադրի կողմից:

«Մի չափազանց ուշագրաւ եւ համակրելի երեւոյթ եւս նկատւում է Լազարեան ձեմարանի ամբողջ կէս տարուայ կեանքի մէջ:

«Սակաւ չեն դէպքերը, երբ մի հիմնարկութիւն, որի մէջ համախմբուած են լինում այլացեղ եւ այլակրօն տարրեր, արհամարհելով նրա վեհ կոչումը, դառնում է ասպարէզ կրօնական ու ցեղային կորստաբեր հարէզ կրօնական ու ցեղային կորստաբեր համակարտութիւն: Հազիւ թէ գտնուի մի այլ հիմնարկութիւն նոյն չափով, ինչ չափով Լազարեան ձեմարանն է եղել ապատ ու մաքուր այդ սկզբունքներից: Ազնիւ ծառայութիւնը դաստիարակութեան վսեմ գործին երբեք չի մթագնուել որ եւ է կողմնակի ձգտումների խառնուրդով: Այն անձինք, որոնք կանգնած էին մեր դպրոցի գլուխը, ինչպէս եւ նրանք, որոնք ղեկավարել են երիտասարդութեան դաստիարակութեան ու կրթութեան գործը, հաւասարապէս պարզ ու յստակ կերպով ըմբռնել են իրենց պարտականութիւնների վեհութիւնը եւ խանդավառուած ազնիւ քաջաքաջաց եւ ազնիւ դաստիարակի ոգով, ներշնչել են նոյնը իրենց աշակերտներին: Ձեմարանի տարեգրութեան մէջ չի կարելի մատնանշել նոյն իսկ մի դէպք, որը այդ իմաստով մի մութ բիծ դրոշմէր նրա գործիչների անուան վրայ: Ձեմարանի բազմաթիւ այլակրօն սաները միշտ կապուած են եղել միմիանց հետ, որպէս մի ընտանիքի զաւակներ: Նրանց սրտերում խորապէս արմատացել էր մի գիտակցութիւն, որ նրանք եղբայրակիցներ են եւ զաւակներ մի մեծ երկրի: Իր յիսունամեայ կեանքը բոլորելով, Լազարեան ձեմարանը կարող է պարծանքով թուել, որ նրա ծոցում սնուել են, մեծացել եւ այդ զգացումների մէջ ամրացել հազարից (1000) աւելի սաներ[10]. այլազան կրօնների, այլազան ծագումով, որոնք այսօր ցրուած են լայնատարած Ռուսաստանի բոլոր ծայրերում եւ որոնք ծառայել ու ծառայում են նրան, նուիրելով իրենց մտաւոր ու բարոյական ոյժերը: Շատերը նրանցից իրենց վաստակով ու չնորհքներով դարձել են արժանաւոր քաղաքացիներ, նրանք ամէնքը զանազան ասպարէզներում եւ հասարակական գործունէութեան զանազան աստիճաններում, պատկանում են պետութեան օգտաւէտ ու ազնիւ ծառայողների շարքին»:

(Շարունակելի:)

ԳԱՏՄՈՒԹԻՒՆ ՀՐԱՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

(Շարունակութիւն:)

ՍԱՖԲԶ-ԱՂԱՃ (Բերա)

Բերայի վերաբերեալ թաղերէն Սաֆբզ-Աղաճի մէջ կազմուած քանի մը Ընկերութիւններ Բերայի տակ յիշած ենք արդէն:

1. ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1916)

Սաֆբզ-Աղաճի Հայ Կաթ. Անարատ Յղութեան Մայրապետներու վարժարանին նախկին աշակերտուհիներու նախաձեռնութեամբ եւ Սարուխանեան Յովսէփ Վրդ.ի օժանդակութեամբ 1916ին կը հիմնուի «Անարատ Յղութեան Նախկին Աշակերտուհիներու Ընկերութիւն»ը, որուն նպատակն է՝ շատոնց գոյութիւն ունեցող Հայ Կաթողիկէներու «Ս. Աննա Որբանոց»ի աշակերտներու սնունդը հոգալ:

---

[7] Գլխաւոր Կառավարչապետի պաշտօնը կոմս Տոլստոյը, համաձայն Հոգաբարձուի խնդրանքին, ընդունեց 1870 թ. Մայիսին:

[8] Տե՛ս «Լ. Ճ. Լիկէոնի 30ամեակը», էջ է—ժ:

[9] Տե՛ս «Լազ. ձեմ. 75ամեակը», էջ 44:

[10] Իրօք՝ 1128 հոգի:

© National Library of Armenia